

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N° 135
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Լեզվի և մշակույթի հավասարապես ուսուցման կարևորությունը

Առարկա՝ Անգլերեն

Ուսուցիչ՝ Հարությունյան Նելլի
Ջրվեժի միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Ներսեսյան Անի

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
• Լեզվի և մշակույթի ուսուցման կարևորությունը.....	4
• Լեզուների ուսուցման գաղափարախոսությունը և գործածությունը.....	6
• Լեզուների դասավանդման սկզբունքները, մեթոդները և տեխնոլոգիաները.....	8
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Լեզվամշակույթը լեզվի և մշակույթի փոխհարաբերությունն ու փոխկապակցվածությունն է, որը վերջին շրջանում գործաբանական ուսումնասիրությունների առանցք է դարձել: Ակներև է այն հանգամանքը, որ համընդհանուր համաշխարհայնացումը կարևորում է տարբեր երկրների և ազգերի մշակույթների իմացությունը, քանի որ օտարի լեզվի և մշակույթի փոխկապակցումը հնարավոր է դարձնում ապահովել միջմշակութային հաղորդակցման արդյունավետությունը: Այն նպաստում է նաև հումանիտար գիտությունների զարգացմանը:

Վերջին ժամանակներում հիմնականում ընդունված գաղափար է դարձել այն, որ միջմշակութային հաղորդակցման մեջ միմյանց չհասկանալու հիմնական պատճառը ոչ միայն լեզվի չիմացությունն է, այլև հաղորդակցվողների ազգային գիտակցության տարբերությունը: Յուրաքանչյուր ազգի աշխարհընկալման հիմքում ընկած են սեփական համակարգի սոցիալական կարծրատիպերի ենթակա արժեքները, հետևաբար՝ մարդկային միտքը միշտ որոշվում է ոչ թե անհատի, այլ ընդհանուր մտածելակերպով: Հաղորդակցման գիտակցության հիմքում ընկած է հաղորդակցական հմտությունների տարբերակումը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել լեզվի և մշակույթի հավասարապես ուսուցման կարևորությունը:

Լեզուն մշակույթի հայելին է, այն արտացոլում է ոչ միայն անհատի ապրելակերպի պայմաններն իրական աշխարհում, այլև ժողովրդի հասարակական ինքնագիտակցումը, ազգային բնավորությունը, նորմերը, քաղաքավարության կանոնները և հատկապես աշխարհընկալումը: Լինելով շրջապատող աշխարհի հայելին՝ լեզուն արտացոլում է իրականությունը, ինչպես նաև ստեղծում աշխարհի պատկերը, որը յուրաքանչյուր լեզվում ինքնատիպ է:

1. Լեզվի և մշակույթի ուսուցման կարևորությունը

Մեր օրերում արագ տեմպերով զարգանում է լեզվամշակութաբանությունը, որի ուսումնասիրության առարկաներն են լեզվի և մշակույթի փոխկապակցվածությունը, զարգացումը, տարբեր միտումները և նկարագրությունները, ինչպես նաև դրանց համաժամանակյա փոխներգործությունը:

Վ. Ֆոն Հումբոլդտը դեռևս XIX դարի վերջին սկիզբ դրեց լեզվամշակութաբանությանը, գիտություն, որը, առաջանալով լեզվի մարդաբանական ուսումնասիրությունների հարացույցի զարգացման արդյունքում, ամրապնդեց լեզվի և ժողովրդի հարաբերությունների փոխկապակցվածությունը:

Վ.Ի. Կարասիկն առաջարկում է դիտարկել մշակութային հասկացությունը որպես բազմակողմանի իմաստաբանական էություն, որում առանձնացվում են հասկացութային, ձևային և արժեքային կողմերը: Հասկացութային կողմը հասկացության լեզվական ամրագրումն է (ֆիքսացիա), նրա նշանակությունը, նկարագրությունը, հատկանշական կառուցվածքը, սահմանումը, տվյալ հասկացույթի զուգահրեհական նկարագիրը այլ տիպի հասկացույթների համեմատությամբ: Ձևային կողմն առարկաների, երևույթների, իրադարձությունների տեսողական, լսողական, շոշափելի, համային բնութագրերն են, որոնք գոյություն ունեն մեր գիտակցության մեջ: Հասկացույթի արժեքային կողմը բնութագրում է տվյալ քաղաքակրթության կարևորությունը ինչպես անհատի, այնպես էլ հասարակության համար:

Լեզուն մշակույթի հայելին է, այն արտացոլում է ոչ միայն անհատի ապրելակերպի պայմաններն իրական աշխարհում, այլև ժողովրդի հասարակական ինքնագիտակցումը, ազգային բնավորությունը, նորմերը, քաղաքավարության կանոնները և հատկապես աշխարհընկալումը: Լինելով շրջապատող աշխարհի հայելին՝ լեզուն արտացոլում է իրականությունը, ինչպես նաև ստեղծում աշխարհի պատկերը, որը յուրաքանչյուր լեզվում ինքնատիպ է: Այսպիսով, լեզվամշակութային հասկացույթը մտային միավոր է, որի քննության հիմնական նպատակը լեզվի, ազգային գիտակցության, մշակույթի,

մասնավորապես տվյալ հետազոտության շրջանակներում քաղաքավարության նորմերի լեզվաբանական ուսումնասիրությունն է:

Միջմշակութային կապերի ընդլայնման արդյունքում հաճախ հաղորդակցման մասնակից են դառնում տարբեր մշակույթների և քաղաքակրթությունների պատկանող ներկայացուցիչներ: Հետևաբար՝ սոցիալ-մշակութային նորմերի մասին անտեղյակությունը կարող է առաջացնել մշակութային շեղում մեկ այլ հասարակության մարդկանց համար և հանդիսանալ խնդրահարույց իրավիճակների պատճառ: Հաղորդակցման մեջ գտնվող մարդկանց արդյունավետ և հաջող հաղորդակցման գրավականը ոչ միայն լեզվական հմտություններն են, գիտելիքները, այլև ազգային – մշակութային բանավոր և գրավոր խոսքի նորմերի կիրառումը: Նախ՝ միջմշակութային հաղորդակցման մեջ անհրաժեշտ է հիմնվել այն փաստի վրա, որ տարբեր մշակույթների պատկանող անհատներն իրենց մշակույթի կրողներն են և կառավարում են քաղաքավարության մասին իրենց ազգային կանոններն ու ավանդույթները: Այսինքն՝ քաղաքավարի վարվելակերպի ազգային և մշակութային առանձնահատկությունների իմացությունը և իրազեկությունը հաջող հաղորդակցման անբաժանելի մասն են: Միջմշակութային հաղորդակցման մեջ քաղաքակիրթ լինելու համար բավարար չէ ունենալ լեզվական հմտություններ, անհրաժեշտ է նաև տիրապետել այսպես կոչված «քաղաքավարության ռազմավարություններին» և կարողանալ դրանք օգտագործել հաղորդակցման մեջ: Անհատին անհրաժեշտ է իմանալ ոչ միայն տվյալ երկրի լեզուն, այլև ինչպես իրեն պահել այդ երկրում տարբեր իրավիճակներում: Այս գիտելիքները և հմտություններն անհրաժեշտ են յուրաքանչյուրին, ով պատրաստվում է շփվել օտարերկրացիների հետ և հաղորդակցվել տվյալ երկրում:

Ոչ ոք չի հերքում, որ լեզուն և մշակույթը փոխկապակցված են: Այնուամենայնիվ, ավելի ճշգրիտ կլիներ ասել, որ մշակութային փոփոխություններն են բերում լեզվի և մտածողության փոփոխությունների: Տվյալ լեզվով հաղորդակցվողներն օգտագործում են լեզվական որոշակի միավորներ, որոնք արտահայտում են տվյալ մշակույթին բնորոշ փորձն ու ընկալումները:

Այդպիսի միավորները կարող են համարվել տվյալ մշակույթի կրողների լեզվական գիտակցության և ընկալման մեջ արմատավորված ծածկագրեր:

2. Լեզուների ուսուցման գաղափարախոսությունը և գործածությունը

Լեզուների ուսուցումն ավագ դպրոցի սաներին պատրաստում է բազմալեզու միջավայրում երկու և ավելի լեզվով ազատորեն հաղորդակցվելու,

այլ մշակույթ կրող անձանց հանդեպ հարգանք և հանդուրժողականություն դրսևորելու և ազատորեն համագործակցելու համար: Ուսուցման գործընթացը ներառում է. լեզվի կիրառական ուսուցում, երբ սովորողները լեզուն կիրառում են առօրյա կյանքում՝ դիմացինին լսելու, հասկանալու, հաղորդակցվելու, սեփական մտքերը, հույզերը հաղորդելու, դիմացինին ինչ-որ բան տվյալ լեզվով սովորեցնելու, իր ձեռքբերած փորձը հաղորդելու նպատակով, ուսուցում լեզվի մասին, երբ սովորողները խորացնում և ամրապնդում են ձեռք բերած լեզվական գիտելիքները, տարբեր լեզուներով գրված տեքստերի ոճական, ժանրային առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ ուսումնասիրություններ են իրականացնում, ուսուցում լեզվի միջոցով, երբ սովորողները լեզուն կիրառում են որպես մտածելու, տեղեկատվություն քաղելու, կուտակված փաստերը քննարկելու, վերլուծելու, տարբեր առարկաներից և գիտական ոլորտներից բազմաբնույթ թեմաներով զեկուցումներ գրելու, լսարանի առջև ելույթ ունենալու և ունկնդիրներին սեփական հետազոտական աշխատանքի արդյունքները հաղորդելու միջոց:

Յուրաքանչյուր առարկայի ուսուցիչ նաև լեզվի ուսուցիչ է և պատասխանատվություն է կրում սովորողների լեզվական կարողությունների ու լեզվի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման հարցում:

Լեզուների ուսումնառությունը շարունակական բնույթ է կրում և իրականացվում է ողջ կյանքի ընթացքում: Լեզուների դասավանդման պլանավորումը իրականանում է եռակողմ համագործակցության միջոցով. այս գործընթացին մասնակցում են ուսուցչամանկավարժական անձնակազմը, սովորողները և նրանց ծնողները: Գործընթացը ներառում է. սանի լեզվական կարողությունների նկարագրություն.

ա. տվյալ փուլում լեզվական գիտելիքների և հետագա ակնկալիքների թվարկում՝ մասնավորապես միջին և ավագ դպրոցների միջև դասավանդման առնչությունները և շարունակականությունն ապահովելու հարցում:

բ. Նպատակների կամ խնդիրների սահմանում՝ համաձայն պետական չափորոշիչի, ինչպես նաև սովորողների անհատական հետաքրքրությունների և

հետազոտական աշխատանքի իրականացման լեզվի ընտրության: Այս դեպքում տվյալ առարկայի ուսուցիչը նաև լեզվի ուսուցիչ է, որն օգնում է սովորողին ճիշտ ձևակերպելու իր մտքերը, կառուցելու ավարտական գրավոր աշխատանքը (էսսե)՝ դրսևորելով համապատասխան լեզվական հմտություններ:

գ. Ինքնուրույն ուսումնառության պլանավորում, այդ թվում՝ իրականացնելիք նպատակների ինքնուրույն որոշում, դիդակտիկական և ուսումնական նյութերի ընտրություն, լեզվական կարողությունների ինքնազարգացում և ինքնագնահատում:

Լրացուցիչ լեզվի յուրացումը ներառում է ոչ միայն լեզվական ունակությունների ձևավորում, այլև սոցիալ-լեզվական, պրագմատիկ և միջմշակութային որակների բարելավում:

Լրացուցիչ լեզվի իմացությունը խթանում է և հնարավորություն է տալիս վայելելու ստեղծագործական և մտավոր գործունեությունը:

Լեզուների դասավանդման խնդիրները՝

- լեզվաքերականական գիտելիքների ձեռքբերում և դրանց կիրառական-գործնական յուրացում.
- տվյալ լեզվին հատուկ մտածողության զարգացում և շարունակական կատարելագործում.
- այլ մարդկանց հետ տվյալ լեզվի բանավոր և գրավոր տեսակներով ազատորեն շփվելու և հաղորդակցվելու կարողության կատարելագործում.
- լեզվի միջոցով համագործակցության հասնելու կարողության զարգացում.
- քննադատական-տրամաբանական մտածողության զարգացում.
- հուզականային ոլորտի և երևակայության զարգացում.
- խոսքի միջոցով ինքնակառավարման, ինքնահսկման, ինքնագնահատման կարողությունների զարգացում.
- տարբեր մշակույթներին առնչվելու, դրանք գնահատելու և արժևորելու կարողության զարգացում.
- սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունների զարգացում.

Լեզուներ դասավանդող ուսուցիչներն օժանդակում են սովորողների լեզվական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանը, խթանում սովորողի որակների ձևավորումն ու վերաբերմունքի դրսևորումը: Դասավանդվող բոլոր լեզուները բավարարում են համընդհանուր մոտեցումների պահանջները և լայն հնարավորություններ են ստեղծում օգտվելու այդ լեզուներով առկա գրականությունից:

3. Լեզուների դասավանդման սկզբունքները, մեթոդները և տեխնոլոգիաները

ա. Համագործակցության, հաղորդակցման ապահովում.

Տարբեր լեզուներով հաղորդակցվող և ստեղծագործող ուսուցիչների միասնական ստեղծագործական աշխատանքը սաներին մղում է լեզուներ սովորելու, դրանց միջոցով հաղորդակցվելու և համագործակցելու ոչ միայն

դասընկերների, ուսուցիչների, այլ նաև տարբեր երկրների իրենց հասակակիցների և մեծահասակների հետ.

բ. Գործնականության և լեզվական համապատասխան միջավայրի ստեղծում.

Դպրոցում բոլոր լեզուների դասավանդումը գործնական-կիրառական բնույթ է կրում, քերականական օրենքները և օրինաչափությունները միջոց են սանի բանավոր և գրավոր խոսքի զարգացման համար.

Սա ապահովելու համար կիրառվում են դերային և դիդակտիկական զանազան խաղեր, ստեղծվում են լեզվական համապատասխան իրավիճակներ և որոշակի միջավայր՝ սանի լեզվական կարողությունների դրսևորման համար.

գ. Պատանու ընդհանուր զարգացման ապահովում.

Լեզուների ուսուցումը նպաստում է պատանու ընդհանուր զարգացմանը. ընտրված գրական և ոչ գրական նյութերը, լեզվական վարժությունները, տեքստային առաջադրանքները այնպես են կազմվում, որ զարգացնեն սանի քննադատական և պատկերավոր մտածողությունը, տրամաբանությունը, երևակայությունը, միջմշակութային կապերը լեզվի միջոցով ընկալելու և արժևորելու կարողությունը.

ա. Լեզուների դասավանդման գործընթացում կիրառվում են հետևյալ տեխնոլոգիաները՝ համագործակցային.

Ուսուցումը կառուցվում է աշակերտ-աշակերտ, ուսուցիչաշակերտ, աշակերտներ-ուսուցիչներ փոխհարաբերությունների հիման վրա. նախագծային. սաները կազմում են որոշ հետազոտական նախագծեր, որոնց իրականացման ընթացքում օգտվում են զանազան աղբյուրներից՝ տարբեր լեզուներով գրված տպագիր և էլեկտրոնային նյութերից.

բ. Մոդուլային.

Սովորողի ինքնուրույնությունը խթանելու համար հաճախ ուսուցիչը նյութի ուսուցումը կազմակերպում է համապատասխան մոդուլներով՝ սովորողին ներկայացնելով լեզվաքերականական տեսական նյութը, համապատասխան

տեքստը, ինչպես նաև կցելով ցուցումներ աշխատանքը կատարելու մասին և նյութի ինքնուրույն յուրացման գործնական առաջադրանքներ և վարժություններ:

գ. Տարբերակված մոտեցման.

Առանձնացվում են լեզվական տարբեր հմտություններ ունեցող աշակերտները, կազմվում են տարբերակված ծրագրեր և սաների հետ աշխատում են ըստ լեզվի տիրապետման աստիճանի և մակարդակի.

Մեթոդները

Լեզուների դասավանդման գործընթացում կիրառվում են հետևյալ մեթոդները:

- խաղային- դերային խաղեր, դիդակտիկական խաղեր, լեզվական և խոսքային զանազան խաղեր, խաղ-վարժանքներ.

Լեզվի ուսումնառության ընթացքում ստեղծում են որոշակի խոսքային միջավայր և դրական վերաբերմունք. լեզվական տարաբնույթ խաղեր մշակում և լսարանում անցկացնում են հենց իրենք՝ սաները:

- Տեքստային աշխատանք- հանգամանալից աշխատանք տեքստի լեզվաոճական, բովանդակային առանձնահատկությունների, բառապաշարի, պատկերավորման միջոցների ընկալման և սեփական քննադատական կարծիքի ձևավորման ուղղությամբ. կարծիք կարդացած, ուսումնասիրած նյութի շուրջ:

Տեքստային համակողմանի աշխատանք իրականացնելուց հետո սեփական ինքնուրույն քննադատական գրականլեզվական եզրակացության շարադրում:

- Բառապաշարի հարստացման աշխատանքներ- ինքնուրույնաբար կամ զույգերով աշխատելով՝ կազմում են բացատրական, հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների երկլեզու կամ եռալեզու բառարաններ:

- Բեմականացում- գրական-գեղարվեստական երկի կամ դրա մի հատվածի համար բեմագրի (սցենար) ստեղծում, երկխոսությունների, մենախոսությունների կառուցում և բեմականացում.

- Էքսկուրսիաներ- ուսումնական դասեր թանգարաններում, ցուցասրահներում. սաները հանդես են գալիս որպես ուղեկցող կամ գիդ և ներկայացնում են տվյալ ցուցադրությունը կամ պատմական վայրը:

- Հարցազրույցներ- հարցերի կազմում և երկխոսություն, լրագրային ակնարկ կամ հոդված:

- Գովազդներ և կայքեր - գովազդում են տարբեր ապրանքներ, գրառումներ են կատարում կայքում, ելույթ են ունենում տարբեր լեզուներ:

Լեզուների գործնական կիրառման նպատակները

Լեզուների գործնական կիրառման համար չափելի, ստուգելի նպատակ է պետք սահմանել, որն իհարկե հեշտ գործ չէ: Որն է՝ գտնել և կատարելագործել քերականական հիմքով կառուցված բանավոր խոսքի զարգացման արդի մեթոդներ , որը կհաշտեցնի բոլորի ընկալումը և բոլորի կողմից ընդունելի կլինի:

Լեզվի գործնական կիրառմանն ուղղված մարտավարություններից է 'օգնել սովորողին այլ լեզվով սեփական կարծիք հայտնելու, տարբեր իրավիճակներում մարդասիրական, հիմնավորված ընտրություն կատարելու, ինքնաճանաչման հիման վրա ճիշտ նպատակներ դնելու, հավասարակշռված որոշում կայացնելու և համապատասխան վարք դրսևորելու կարողություններ ձևավորելու գործում:

Գերմանացի գիտնականները գտնում են, որ մանկավարժական գիտության հետագա զարգացումը հնարավոր է ապահովել հովիվի սկզբունքների օգտագործմամբ՝ «բնության հետ համահունչ» ուղիով: Նրանք այնքան են, որ ամբողջական մտածողության ձևավորումը հնարավոր է միայն մարդու կողմից բնության օրենքների իմացության դեպքում, այլապես այն կնմանվի մի շինարարության, որտեղ բանվորներից յուրաքանչյուրը աշխատում է կառույցի մի փոքր հատվածի վրա, առանց ծանոթ լինելու ողջ կառույցին: Այն է ասել ,որ աշակերտին պետք է լիովին մոտիվացնել լեզու սովորելու գործընթացին այնպես, որ նա պատկերացնի ինչու և ինչպես կարելի է լեզվի գործնական կիրառմամբ լուծել աշխարհի հաղորդակցական շատ խնդիրներ:

Հաղորդակցական մեթոդը, կարելի է ասել, երկլեզու և ուղիղ մեթոդների համադրումն է: Այստեղ նպատակը հաղորդակցական հմտություններ զարգացնել

է, ոչ թե լեզվի կառուցվածքային գիտելիքները: Ինչպես երեխան է լսելով և կրկնելով սկսում խոսել՝ առանց հասկանալու քերականական կառուցվածքի առանձնահատկություններն ու նրբությունները, այնպես էլ սովորողն է հիմնականում առանց նշումների, միայն լսելով և խոսելով յուրացնում լեզուն: Այս մեթոդը երկլեզու մեթոդի հետ շատ ընդհանրություններ և տարբերություններ ունի: Նման է, քանի որ չի արգելում մայրենի լեզվի գործածմամբ ճշտումներ կատարել, անհասկանալին պարզաբանել, սակայն տարբեր է նրանով, որ շեշտը չի դնում քերականական կառուցվածքների ուսուցման վրա՝ պարզաբանելով, որ դրանք, ուսուցման որոշակի փուլում, ինքնստիներքյան հասկանալի կդառնան սովորողի համար: Ուղիղ մեթոդի հետ նույնպես ընդհանրություններ կան: Հաղորդակցական մեթոդը շեշտը դնում է հենց հաղորդակցման վրա, նվազագույնի է հասցնում քերականական բացատրությունները և մայրենի լեզվի կիրառումը, սակայն չի արգելում դրանք:

Քերականական-թարգմանական մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դասավանդման գործընթացում չեն տարանջատվում բառապաշարն ու քերականությունը: Յուրաքանչյուր նոր բառ ներկայացվում է տարբեր համատեքստերում, այսինքն դասավանդողը ներկայացնում է այդ բառի բառարանային բոլոր իմաստները, դրանով կազմվող բացառությունները և/կամ այլ նրբություններ ունեցող արտահայտությունները:

Նախադասությունների մեջ գործածելիս դասավանդողը խոսքն այնպես է կազմում, որ նոր բառը, որպես խոսքի մաս, հանդես գա նախադասության այն բոլոր հնարավոր անդամների դերերում, որոնք թույլ է տալիս քերականությունը և սովորողին ներկայացնում է արտահայտությունների և բառակապակցությունների անդամային դերը նախադասության մեջ: Իսկ եթե նոր բառը բայ է, դրանով նաև կազմվում են սովորողին ծանոթ բոլոր ժամանակաձևերը: Օտար լեզվի ուսուցման ընթացքում քերականական-թարգմանական մեթոդի կիրառումը սովորողին հնարավորություն է տալիս նախադասություններ կազմելիս իր սովորած «պատրաստի» արտահայտություններն ու բառակապակցությունները «տեղադրել» նախադասության մեջ՝ պարզապես իմանալով տվյալ լեզվի

շարահասական առանձնահատկությունները՝ նախահասության անդամների գործածման հերթականությունը խոսքում: Այսինքն, սովորողը յուրացնում և գործածում է «պատրաստի» քերականական ձևերը, ոչ թե առանձին բառերը շարահյուսական համատեքստում:

Դասընթացի ընթացքում գրառումներ կատարելու պատճառով ժամանակ չկորցնելու նպատակով՝ դասավանդողները իրենց մշակած բառապաշարն ու դրանց գործածման հնարավոր տարբերակները գրավոր /թղթային/ տարբերակով ներկայացնում են սովորողին /այդ պահին կամ հաճախ նաև նախորդ դասին/: Հարկ է նշել, որ այս մեթոդը հիմնական շեշտը դնում է գրավոր խոսքի զարգացման վրա, քանի որ սովորողը ավելի շատ աշխատում է տեսողական պատկերների, քան լսողական հնչյունների հետ:

Դասընթացի ժամանակ դասավանդողը թարգմանում է սովորողի ներկայացրած նյութը, բացատրում արտահայտությունների և նախահասությունների կազմության քերականական ու շարահասական սկզբունքները, դրանցում առկա ժամանակաձևերը և այլն: Նա նաև սովորողի հետ կազմում է հաղորդակցման ժամանակ թեմայի հետ առնչվող հավանական հարցաշար՝ պատասխանների հնարավոր տարբերակներով:

Սովորողը դասավանդողի ներկայությամբ կարդում է օտար լեզվով թարգմանված ամբողջ նյութը, դասավանդողը շտկում է առոգանությունն ու արտասանությունը, հանձնարարում է հաջորդ դասի համար անգիր սովորել այն և պատրաստ լինել այդ թեմայով հաղորդակցվելու:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ մեկ թեմա մշակելիս և թարգմանելիս առնչվում ենք բազում քերականական ձևերի հետ, որոնք մեկ օրում բացատրել և առավել ևս յուրացնել հնարավոր չէ: Այս դեպքում դասավանդողը, գործի դնելով իր մանկավարժական հմտությունները և հետևելով օտար լեզվի ուսուցման ծրագրային հերթականության սկզբունքներին, յուրաքանչյուր դասընթացին անդրադառնում է քերականական որոշ թեմաների՝ մյուսների բացատրությունը թողնելով հաջորդող դասաժամերին:

Երկլեզու մեթոդը սովորողների մոտ հատկապես զարգացնում է բանավոր թարգմանություն կատարելու հմտությունները, քանի որ ողջ ուսուցման ընթացքում երկու լեզուներն էլ համազոր և հավասարապես «աշխատում են»: Կարելի է ասել, յուրաքանչյուր թեմայի անդրադառնալիս՝ նախ բախվում ենք մայրենի լեզվով այդ թեմայի շուրջ խոսք կառուցելու և զարգացնելու պահանջին: Կարծում ենք, երկլեզու մեթոդի կիրառումը հարմար չէ լսարանային և խմբակային ուսուցման համար:

Այս մեթոդն անհատական մոտեցում է պահանջում, իսկ բազմամարդ միջավայրում քայլերի վերոնշյալ հաջորդականությամբ արդյունավետ աշխատելն գրեթե անհնարին է դառնում կամ դանդաղեցնում է ուսուցման ընթացքը:

Ակտիվ ուսուցման մեթոդը համարվում է կարգապահական ոճով դասընթացն անցկացնելու միջոց: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հենց առաջին դասից սովորողի հետ աշխատում են չորս հմտությունները՝ կարդալ, գրել, լսել, խոսել /reading, writing, listening, speaking/ հավասարապես զարգացնելու ուղղությամբ: Այս դեպքում սովորաբար մեկ դասընթացը բաշխում են չորս հավասար ժամաբաժինների՝ յուրաքանչյուրի ընթացքում մեկ հմտության շուրջ աշխատելու համար: Տվյալ դասընթացի համար նախատեսված բառապաշարի և քերականության շրջանակներում աշխատանք է տարվում չորս հմտությունները զարգացնելու ուղղությամբ:

Սովորաբար այս մեթոդի կիրառումը գործնականում հետևյալ կերպ է արտահայտվում. ընտրվում է համապատասխան քերականական նյութ պարունակող տեքստ, որը սովորողը կարդում է, թարգմանում, դուրս գրում անձանոթ բառերն ու արտահայտությունները, կատարում այնպիսի վարժություններ կամ առաջադրանքներ, որոնք ստուգում են բառապաշարի և քերականության յուրացումը և կատարելագործում դրանք, հետո դասավանդողը օտար լեզվով խոսում է այդ տեքստի շուրջ, մեկնաբանություններ անում և նույնը պահանջում սովորողից: Վերջինս փորձում է հասկանալ խոսքը և խոսելու միջոցով վերարտադրել ստացած գիտելիքները:

Այսպիսով, դասընթացի ընթացքում սովորողը և՛ յուրացնում, և՛ կիրառում է նյութը: Հաջորդող դասընթացների ընթացքում հմտությունների շուրջ աշխատելիս դասավանդողը պարբերաբար անդրադառնում է նախորդ դասերի նյութերին, որպեսզի սովորողը լավագույնս մտապահի դրանք: Հաշվի առնելով ուսումնագիտական ոլորտի և գործատուների պահանջները, կարծում ենք, ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է, քանի որ մեր օրերում առավել քան կարևորվում է լեզվի ակտիվ՝ տեսական և գործնական իմացությունը:

Տեսալսողական մեթոդի մեջ առավել ռացիոնալն են լսողական ընկալման և լսողական հիշողության զարգացման մեթոդները, խստորեն ընտրված մոդելներից ակտիվ մշակումը, խոսքի ինտոնացիոն մոդելների վերապատրաստումը:

Մեթոդը նախատեսված է մեծահասակների համար, ովքեր ֆրանսերենի իմացության կարիք ունեն ֆրանսիական կրթական հաստատություններում դասախոսությունների և ֆրանսիացիների հետ գործնական հաղորդակցության համար: Այս մեթոդը տարածում է գտել նաև Անգլիայում, Կանադայում, Թուրքիայում, Մեքսիկայում, Լեհաստանում:

Այս մեթոդի բացասական կողմերն են՝ մեխանիկական ասոցիացիաների փխրունությունը և կարծրատիպերի ոչնչացումը, անբավարար պրակտիկան և աշխատանքի ընդհատումները, կարդալու և գրելու թերագնահատումը, աշխատանքի նեղ գործնական կենտրոնացումը և ընդհանուր կրթական տարրերի բացակայությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզուն մշակույթի հայելին է, այն արտացոլում է ոչ միայն անհատի ապրելակերպի պայմաններն իրական աշխարհում, այլև ժողովրդի հասարակական ինքնագիտակցումը, ազգային բնավորությունը, նորմերը, քաղաքավարության կանոնները և հատկապես աշխարհընկալումը: Լինելով շրջապատող աշխարհի հայելին՝ լեզուն արտացոլում է իրականությունը, ինչպես նաև ստեղծում աշխարհի պատկերը, որը յուրաքանչյուր լեզվում ինքնատիպ է: Այսպիսով, լեզվամշակութային հասկացույթը մտային միավոր է, որի քննության հիմնական նպատակը լեզվի, ազգային գիտակցության, մշակույթի, մասնավորապես տվյալ հետազոտության շրջանակներում քաղաքավարության նորմերի լեզվաբանական ուսումնասիրությունն է:

Այսպիսով, լեզվի միջոցով մենք ներկայացնում ենք մեր փորձն ու մշակույթը, մեր ընկալումները, իսկ լեզուն էլ, իր հերթին, ձևավորում է մեր

մտածելակերպն ու մշակույթը: Հետևաբար, լեզվի և մշակույթի փոխազդեցությունը, փոխկապվածությունը, միասնությունը փաստ է: Մի կողմից լեզուն արտացոլում է լեզվակրի մոտեցումները, համոզմունքները, աշխարհայացքը, մյուս կողմից՝ մշակույթը լեզվական արտահայտման անբաժանելի մասն է: Լեզուն նպաստում է մշակույթի պահպանմանը, իսկ մշակույթը՝ լեզվի:

Մշակույթը հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով ու տիպերով: Մշակույթը կենտրոնական հայեցակարգ է մարդաբանության մեջ և ներառում է այն բոլոր երևույթները, որ սոցիալական ուսուցման միջոցով փոխանցվում են մարդկային հասարակություններում:

Մշակույթն ընդգրկում է ոչ միայն մարդկանց գործունեության առարկայական արդյունքները (մեքենաներ, տեխնիկական կառույցներ, արվեստի ստեղծագործություններ, իրավունքի և բարոյականության նորմեր և այլն), այլև սուբյեկտիվ մարդկային ուժերն ու ընդունակությունները, որոնք իրականացվում են գործունեության մեջ (գիտելիքներ, ունակություններ, արտադրական և մասնագիտական հմտություններ, աշխարհայացք և այլն): Մշակույթը, արտադրության հոգևոր և նյութական տեսակներին համապատասխան, բաժանվում է հոգևոր մշակույթի և նյութական մշակույթի: Նյութական մշակույթն ընդգրկում է ողջ նյութական գործունեությունը և դրա արդյունքները (աշխատանքի գործիքներ, կացարան, հագուստ, հաղորդակցության միջոցներ, տեխնոլոգիաներ, ճարտարապետություն, արվեստ և այլն), հոգևոր մշակույթը՝ գիտակցության, հոգևոր արտադրության ոլորտը (ճանաչողություն, բարոյականություն, դաստիարակություն, լուսավորություն, հասարակական գիտակցության ձևեր), առասպելաբանություն, փիլիսոփայություն, գրականություն (բանավոր և գրավոր): Գիտությունը կազմում է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգություն:

Ելնելով այս ողջ հետազոտությունից՝ կարողացա եզրակացնել և համոզվել, որ ուսուցչի բարձր սպասելիքները սովորողից՝ ուղիղ համեմատական են սովորողի մոտիվացիայի և ներգրավվածության հետ:

Իմացաբանական լեզվամշակութաբանությունը պատասխանում է այն հարցին, թե ինչպես և ինչ միջոցներով են լեզվում արտացոլվում տվյալ լեզվով խոսող ժողովրդի մշակութային (կենցաղային, հոգևոր, հասարակական և այլն) հայացքները:

Նպատակահարմար է 90 րոպեանոց կրկնակի դասերի անցկացումը: Դպրոցները պետք է ունենան ներդպրոցական պլանավորման ավելի մեծ ազատություններ, ճկուն գործիքներ:

Շատ կարևոր է նաև ուսուցիչներին ցուցաբերվող մասնագիտական աջակցությունն առավել օգտակար և թիրախային դարձնելու համար բոլոր ուսուցիչների համար չիրականացնել միանման դասընթացներ: Իրականացնել ուսուցիչների մասնագիտական զարգացման թեմատիկ դասընթացներ՝ հիմնվելով ուսուցիչների կարիքների և մասնագիտական պատրաստվածության վրա: Օրինակ՝ դասարանի կառավարում, առաջնորդություն, տեխնոլոգիաների կիրառում դասապրոցեսում, հետ մնացող աշակերտների հետ աշխատելու հմտություններ, շնորհալի աշակերտների հետ աշխատելու հմտություններ, գնահատման հմտություններ և այլն:

Կարևոր է, որ յուրաքանչյուր ուսուցիչ ինքը ընտրի այն մեթոդները, որոնք տվյալ դասը կդարձնեն ավելի հետաքրքիր և մատչելի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Մելիքյան Գ., Գալոյան Ա., Միասնացված ուսուցման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում, Մանկավարժություն, N 3, 2012:
- Гумбольдт В. Ф. Язык и философия культуры. Москва, 1985, 377 стр.
- Информационные коммуникационные технологии в образовании, ЮНЕСКО, 2013 Зейлигер – Рубинштейн 1997, с. 99/.
- Карасик В. И. Языковой круг: личность, концепты, дискурс: монография. Волгоград, 2002.
- Телия В. Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. Москва, 1996, 217 стр.
- <https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf>:// <https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf>"lib <https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf>

[18/.pdf".](https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf) HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"armedu HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf". HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"am HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"/ HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"files HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"/ HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"resource HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"/ HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"files HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"/2023-10-18/. HYPERLINK "https://lib.armedu.am/files/resource/files/2023-10-18/.pdf"pdf